№ 203 ՇԱԲԱԹ ՆՈՅԵՄԲԵՐԻ 7 **1898** ՇԱԲԱԹ ՆՈՅԵՄԲԵՐԻ 7 № 203

ՔՍԱՆՎԵՑԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարվան 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, Редакція „Мшакъ".
Կամ Tiflis, Rédaction „Mschak".
Տէլէֆոն № 253.

ՄՇԱԿ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից)

Ցայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Ցայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ.
Տէլէֆոն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ԱՌԱՋԻԿԱՑ **1899** ԹԻԱԿԱՆԻ

ՄՇԱԿ

(27-ՐԴ ՏԱՐԻ)

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

«ՄՇԱԿԸ» ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՎԻ ՆՈՅՆ ՊՐՕԳՐԱՄՄՈՎ ԵՒ ՆՈՅՆ ՈՒՂՂՈՒԹԵԱՄԲ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ. «Մշակի» տարեկան գինը 10 ռուբլի է, տասն և մէկ և տասն ամսվանը՝ 9 ռ., ինն և ութ ամսվանը՝ 8 ռ., եօթ ամսվանը՝ 7 ռ., վեց ամսվանը՝ 6 ռ., հինգ ամսվանը՝ 5 ռ., չորս ամսվանը՝ 4 ռ., երեք ամսվանը՝ 3 ռ., երկու ամսվանը՝ 2 ռ., մի ամսվանը՝ 1 ռուբլի։

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԵԱՆ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ. Ամերիկայի բաժանորդները պէտք է վճարեն տարեկան 6 դոլլար. Եւրոպայի բաժանորդները՝ 30 ֆրանկ. Պարսկաստանի բաժանորդները՝ 10 ռուբլի։

«ՄՇԱԿԻՆ» գրվել կարելի է ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ (Բաղարնայա և Բարօնսկայա փողոցների անկիւն)։

Կայսրութեան ուրիշ քաղաքներից «ՄՇԱԿԻՆ» գրվելու համար, և առհասարակ նամակներ և ծրարներ ուղարկելիս, պէտք է դիմել հետևեալ հասցէով. ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ». իսկ արտասահմանից՝ TIFLIS, Rédaction du journal arménien «MSCHAK».

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

Եփեմիա Եգօրովնա, բժիշկ Միքայէլ Գէորգեան և Նիկողայոս Գէորգեան Աղաջանեանցները և Կատարինէ Եգօրովնա Մանուէլեանցը իր զաւակներով սրտի կսկիծով յայտնում են իրանց աղգականներին և ծանօթներին՝ առաջինն իր վաղամեռ թանկագին աղջկայ, երկրորդներն իրանց անմոռանալի քրոջ և երրորդն իր թանկագին քրոջ աղջկայ՝

ՄԱՐԻԱՄ ԳԷՈՐԳԵԱՆ ԱՂԱՋԱՆԵԱՆՑԻ

մահը։ Յուղարկաւորութիւնը տեղի կունենայ կիրակի, նոյեմբերի 8-ին, առաւօտեան 10 ժամին իրանց բնակարանից (Միքայէլեան փողոց, տուն № 60, Ռէալական ուսումնարանի դիմաց) դէպի Վանքի ժայռ-եկեղեցին։

Անբիծք կը կատարվի նոյեմբերի 7-ին, շաբաթ օր, երեկոյեան ժամը 5½-ին։ 1—1

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՀԱՅԵՐԷՆ ՀԻՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԹՆԴԻՐՆԵՐ

—

Ա. ՄՈՎՍԷՍ ԽՈՐԵՆԱՑԻ

(Շարունակութիւն)

—

Դ. Վենետկոյ Մխիթարեան Հարը՝ որ ի վաղ ժամանակաց ունէին յիւրեանց թանգարանի թէ զՓոքր Սոկրատն և թէ զՓոքր Սեղբեստրոսն, (տեսանք որ անդտին ի 1836 տարւոյն բազմերախտ վարդապետն Հ. Մկրտիչ Աւգերեան դիտած էր նաև թէ Պատմութեանն Սրբոյն Սեղբեստրոսի—Փոքր Սեղբեստրոսի—«հետք կան և ի բանս Խորենացւոյն»,) Վենետկոյ Մխիթարեան Հարք, կրեսմ, պարտական էին լիովին ուսումնասիրել զերկոսեան գրութիւնսդ, և Խորենացւոյ Պատմութեան քննական հրատարակութեան մէջ մանրամասնօրէն համեմատելով զնոյնութիւնս Խորենացւոյ մատենին և Փոքր Սոկրատայ ու Փոքր Սեղբեստրոսի՝ վճռել թէ թարգմանիչն երկու յետին դրուածոցդ օգտուած է յեօթներորդ դարու ի Պատմութենէն Խորենացւոյ, այն Խորենացւոյ՝ որ էր ի թուոյ Երկրորդ Աշակերտաց Սահակայ և Մաշտոցի, հետևաբար Հինգերորդ դարու պատմագիր։ Եթէ դայս այսպէս վճռած ըլլային հմտաբար, (ոչ թէ յախուռն՝ ինչպէս այժմ շատ բան կը վճռէ Հ. Բաբսեղ Սարգիսեան,) Տ. Կարիէր՝ Սեղբեստրոսի և Սոկրատայ քանի մի տողերում՝ յանտեղի կարծիս չէր դառածաներ, թէ Խորենացի ընդօրինակած է ի Սեղբեստրոսէ և ի Սոկրատայ, ուրեմն Խորենացի գրած է զիւր Պատմութիւն յԵրեքորդ դարու.—Տ. Կարիէր չէր նկատեր զՀայ գրագէտքս իբր նախիր ապուշներու՝ որ լեռնաբերձ տիժարութեամբ զՈՒթերորդ դարու Խորենացին մինչև ցայժմ հաւատացած ենք Հինգերորդին.—Տ. Կարիէր չէր չփանար խրոխտանօք թէ իւր չքնաղ գիւտիւ Հայերէն գրականութեան պատմութեան մէջ «իրական յեղափոխութիւն—révolution (!!!)» յառաջ բերած է («Հանդէս», 1896, երես 34 բ.)։

Ես պատեհութիւն կամ ժամանակ ունեցած չեմ Ս. Ղազարու վանաց մէջ ուսումնասիրելու զՍոկրատ և զՍեղբեստրոս. գիտէի միայն զպատառիկսն որ կան ի Նոր Հայկազեան Բառարանին։ Երկու գրուածոցդ ալ ծանօթացայ յամին 1890, շնորհիւ իմ անդուգական բարեկամիս Վսեմ. Տ. Կ. Եղեանցի, յայն Ձեռագրէ զորոյ նըկարագիրն կու տայ Յառաջաբանն Ստեփանոսի Ասողկան (տպ. Պետերբուրգի, 1885, երեսք ԼԳ—ԼԹ), և ընդօրինակեցի զայնոսիկ յիմ պէտս։

Գաղղիացի ուսուցչապետին «Հանդիսի» մէջ հրատարակեալ յօդուածներովն (1892, Օգոստոս, 250—253. Դեկտեմբեր, 373—379. 1893, Յունիս, 178—186)՝ ինձ այնպէս թուեցաւ, որ Վիեննայի Մեծապատիւ Մխիթարեանք չունէին զՍեղբեստրոս և զՍոկրատ, և այս պատճառաւ ոչինչ կառարկէին ընդդէմ Կարիէրի։ Գրեցի առ Հ.... 26 Յունիս 1893 նամակաւս. «Ունիք զՓոքրը Սոկրատն. եթէ չունիք՝ կարեմ յղել Ձեզ զիմ օրինակն»։ Պատասխան ընկալայ թէ չունին, և ի 16 Յուլիսի 1893 յղեցի ի Վիեննա զիմ ընդօրինակութիւն Սեղբեստրոսի և Սոկրատայ, զոր և ամբողջապէս գաղափարեցին [1]) իւրեանց մատենադարանին համար՝ հաճութեամբ Վսեմ. Տ. Կ. Եղեանցի։

Փոքր Սոկրատայ ընդօրինակութեանս հետ յըղեցի միանգամայն յօդուածն մի առ պատուական Խմբագրութիւն «Հանդիսի», որ և հրատարակեցաւ 1893-ի Սեպտեմբերի ամսաթերթին մէջ, երեսք 273—278, սովին վերնագրով. «Իմ կարծիք զկրկին թարգմանութեանց Եկեղեցական Պատմութեան Սոկրատայ Աքղաստիկոսի և զնոյն թարգմանչաց»։ Յօդուածս անուղղակի հերքումն էր Կարիէրեան կարծեաց, քանզի կ'ըսէի թէ Փոքր Սոկրատայ թարգմանիչն այլևայլ պատմական մանրամասնութիւններ առած է ի Խորենացւոյ, պէսպէս բառեր՝ որ Խորենացւոյ յատուկ են, և շատ ձևեր ու ասացուածներ՝ որ նոյնպէս Խորենացւոյ սեպհականութիւնք են և Աքղաստիկոսին յունարէն բնագրին մէջ կը պակասին. ուր Կարիէր մի միայն նմանութիւն գտնելով Խորենացւոյ և Փոքր Սոկրատայ՝ իսկ և իսկ հետևցուց թէ Խորենացի ընդօրինակած է ի վերջնոյս յԻՌ-ԹերորդԴարու, այնու զի Փոքր Սոկրատայ հատուածին չգտնուիր ի յոյն բնագրին։ Ցոյս ունէի որ կը քննուէին կը ստուգուէին իմ գրածներս, և իրաւունք կը տրուէր լինձ՝ թէ արդարև Փոքր Սոկրատայ թարգմանիչն անհմուտ է յունարէնի, անհմուտ է հայերէնի, և սաստիկ իմաստակ, այսինքն՝ գիտուն ձևանալ ուզող. թէ իւր իմաստակութեանն համար է, որ քաղած է զանազան պատմական տեղեկութիւնս ի Խորենացւոյ և յայլ հնագոյն և նորագոյն հայերէն աղբերաց, անգիտանալով, որ թարգմանչին գլխաւոր պարտքն է հաւատարմութեամբ թարգմանել զբնագիրն, զոր կարէ համառօտել առ կարճութեան ժամանակի, կամ «յաղագս նուազութեան քարտի և մագաղաթի» [1]) կամ այլ զինչ և իցէ բանաւոր պատճառաւ, բայց ոչ թէ ընդարձակել ըստ քմաց. թէ հայերէն լեզուի անհմտութիւնն է, որ թելադիր եղած է անճարակին՝ Խորենացւոյ և այլ հնագոյն հայերէն մատենագրութեանց տեղերով և ասացուածներով պատրուակել զիւր խայտառակութիւնն, կարծելով թերևս թէ կը գեղեցկաբանէ, առանց իմանալու որ մարգարիտներն մարգարտէ շարոցի կը վայլեն, և խիճերու կոպիճներու հետ չը կարեն ընդելուզուիլ։ Ահա ամբողջական ցանկ հայ մատենագրաց և մատենագրութեանց՝ յորոց

[1]) Տե՛ս Տաշեան, Ցուցակ Հայ. Ձեռ. Մատենադարանին Մխեթ. ի Վիեննա, 1895, երես 925. տես և Տէր-Մովսէսեան, Սոկրատայ Աքղաստիկոսի Եկեղեցական Պատմութիւն, Էջմիածին, 1897, Յառաջաբան, երես Դ.

[1]) Ինչպէս կ'ըսէ Մեծ Սոկրատայ Թարգմանիչն Փիլոն Տիրակացի, որ ձիշդ այս պատճառաւ զանց ըրած է թարգմանել յունարէն բնագրին մէջ գտնուած քաղում նամակներ. տե՛ս տպ. Էջմիածնի, 1897, Յառաջաբան, երես ԺԷ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Մեծ Իշխան Միխայիլ Նիկոլայեվիչի յօբելեանը. Թիւրք գերմանական բարեկամութեան հետեւանքները.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Հայ-ռուսական որբանոցները Թիւրքիայում. Ժողովրդական համալսարան. Նամակ Ախալքալաքից. Նամակ Նոր-Նախիջևանից. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մեծագործութիւնը—ինքնապաշտպանութեան զէնք. Աւստրիական պարլամենտում. Նամակ Գերմանիայից. Նամակ Հաքեշտանից. ՀԵՌԱԳԻՐՆԵՐ. — ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Հայերէն հին գրականութեան խնդիրներ։

ՄԵԾ ԻՇԽԱՆ ՄԻԽԱՅԻԼ ՆԻԿՈԼԱՅԵՎԻՉԻ ՅՕԲԵԼԵԱՆԸ

—

Վաղը, նոյեմբերի 8-ին, Ռուսաստանը տոնում է Կովկասեան նախկին փոխարքայ Մեծ Իշխան Միխայիլ Նիկոլայեվիչի պետական գործունէութեան յիսնամեայ յօբելեանը։ Այդ յօբելեանը առանձնապէս թանգ է կովկասցիների համար, որոնց սրտերում Մեծ Իշխանը թողել է անմոռանալի յիշատակներ։ Միխայիլ Նիկոլայեվիչի փոխարքայութեան օրով, 1863 թուից մինչև 1881, Կովկասում հաստատվեց կուլտուրական և հասարակական-քաղաքացիական խաղաղ զարգացման գործը։ Մտցվեց ընդհանուր դատաստանական ըէֆորմ, կազմակերպվեց գիւղական համայնքի դատավարական գործը, սկիզբ դրվեց քաղաքային ինքնավարութեան և մեծ զարգացում ստացաւ թէ՛ արական և թէ իգական սեռի կրթութեան գործը։ Երկիրն սկսեց հանգստանալ դարերով տեղի ունեցած կռիւներից և հալածանքներից։ Տեղական կեանքն սկսեց արթնանալ խոր թմրութիւնից և փորձեր անել քաղաքակրթութեան նոր ճանապարհի վրա։

Մեծ Իշխան Միխայիլ Նիկոլայեվիչ ծնվեց 1832 թուին, հոկտեմբերի 13-ին։ Առաջին օֆիցէրական աստիճանը նա ստացաւ 1846 թուին, իսկ 1855 թուին, քսաներեք տարեկան հասակում, նշանակվեց պետական խորհրդի անդամ, ռուս-թիւրքական պատերազմից յետոյ ստացաւ գեներալ-ֆելդմարշալութիւն, իսկ 1881-ին նշանակվեց պետական խորհրդի նախագահ։ Իր բոլոր պաշտօններում, և ամբողջ իր գործունէութեան միջոցին՝ նա յայտնի եղաւ իբրև լայն պետական հայեացքների ունեցող անձն։

Կովկասցիները, որոնք միշտ առանձին սիրով են յիշում նախկին փոխարքային և որոնք իրանց համակրութիւնը նորից արտայայտեցին նրա վերջին այցելութեան միջոցին, այժմ յիսնամեայ յօբելեանի առիթով միանում են ընդհանուր Ռուսաստանի յարգանքի զգացմունքներին։ «Մշակը», որ ծնունդ է առել Մեծ Իշխանի փոխարքայութեան օրով, ողջունում է այդ յօբելեանը։

ԹԻՒՐՔ-ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԲԱՐԵԿԱՄՈՒԹԵԱՆ ՀԵՏԵՒԱՆՔՆԵՐԸ

—

Կ. Պոլսից գրում են կիսապաշտօնական օրգան հաստատվող «Koelnische Zeitung» լրագրին. «Թէև Գերմանիայի բարեկամական յարաբերութիւնը դէպի Թիւրքիան չէ կարող խանգարել Ռուսաստանի մշտական թշնամական ձգտումներին, որոնք ուղղված են Օսմանեան պետութեան դէմ, և պատերազմելու ցանկութեան, որ պարբերաբար ծագում է Ռուսաստանի մէջ,—այնուամենայնիւ, այդ ձգտումներն ու ցանկութիւնները կարելի կը լինի մի քիչ սանձահարել, հէնց որ Ռուսաստանը կը համոզվի, թէ Թիւրքիան մի քանի հանգամանքների մէջ Գերմանիայի կողմից դիպլոմատիական աջակցութիւն կը գտնէ։ Ի հարկէ, չը պէտք է չափազանցել իրերի ներկայ դրութիւնը, բայց և այնպէս, կարելի է ենթադրել, որ Գերմանիան թարգմանչաց։ Յօդուածս անուղղակի հերքումն էր Կարիէրեան կարծեաց, քանզի կ'ըսէի թէ Փոքր Սոկրատայ թարգմանիչն այլևայլ պատմական մանրամասնութիւններ առած է ի Խորենացւոյ, պէսպէս բառեր՝ որ Խորենացւոյ յատուկ են, և շատ ձևեր ու ասացուածներ՝ որ նոյնպէս Խորենացւոյ սեպհականութիւնք են և Աքղաստիկոսին յունարէն բնագրին մէջ կը պակասին. ուր Կարիէր մի միայն նմանութիւն գտնելով Խորենացւոյ և Փոքր Սոկրատայ՝ իսկ և իսկ հետևցուց թէ Խորենացի ընդօրինակած է ի վերջնոյս յԻՌ-Թերորդ դարու, այնու զի Փոքր Սոկրատայ հատուածին չգտնուիր ի յոյն բնագրին։ Ցոյս ունէի որ կը քննուէին կը ստուգուէին իմ գրածներս, և իրաւունք կը տրուէր լինձ՝ թէ արդարև Փոքր Սոկրատայ թարգմանիչն անհմուտ է յունարէնի, անհմուտ է հայերէնի, և սաստիկ իմաստակ, այսինքն՝ գիտուն ձևանալ ուզող. թէ իւր իմաստակութեանն համար է, որ քաղած է զանազան պատմական տեղեկութիւնս ի Խորենացւոյ և յայլ հնագոյն և նորագոյն հայերէն աղբերաց, անգիտանալով, որ թարգմանչին գլխաւոր պարտքն է հաւատարմութեամբ թարգմանել զբնագիրն, զոր կարէ համառօտել առ կարճութեան ժամանակի, կամ «յաղագս նուազութեան քարտի և մագաղաթի» [1]) կամ այլ զինչ և իցէ բանաւոր պատճառաւ, բայց ոչ թէ ընդարձակել ըստ քմաց. թէ հայերէն լեզուի անհմտութիւնն է, որ թելադիր եղած է անճարակին՝ Խորենացւոյ և այլ հնագոյն հայերէն մատենագրութեանց տեղերով և ասացուածներով պատրուակել զիւր խայտառակութիւնն, կարծելով թերևս թէ կը գեղեցկաբանէ, առանց իմանալու որ մարգարիտներն մարգարտէ շարոցի կը վայլեն, և խիճերու կոպիճներու հետ չը կարեն ընդելուզուիլ։ Ահա ամբողջական ցանկ հայ մատենագրաց և մատենագրութեանց՝ յորոց

[1]) Բաց ի մանր մանր բաներից՝ յԵղնիկայ առեալ է նոյնպէս Փոքր Սոկրատայ ըսելն (երեսք 435, 449)՝ թէ Արիանոսք աստեղագիտութեամբ կը հմայէին, որ Թէոդոս Առաջին կայսրն պիտի սպանուէր Մաքսիմոս Բռնակալին ձեռօք։ Համեմատէ ընդ գրեալսն Յեղնիկայ յերես 156. „Որպէս թէ յորժամ կռոնոսն յաստեղատուէն մոռեցեալ, թագաւոր մեռանի, որ եղեն իսկ երկիցս, որպէս ասեն առ Թէոդոսիս կայսերս, և քաւեցեալն պնդեալ էին՝ թէ մեռանի թագաւորն, և նա ոչ մեռաւ"։ Շատ աշխատած էի իմանալու համար թէ ո՞վ է այս Թէոդոս կայսր, Առաջի՞ն թէ Երկրորդն։ Եղնիկայ մատենին ցանկն ոչ ինչ կուսուցանէր ինձ՝ պարզապէս «Թէոդոս» գրելով։ Փնտռեցի ի Lebeau, Histoire du Bas-Empire, բայց այնչափ ինչ միայն գտայ՝ ծանօթաբանեալ ի Սէն—Մարտէնէ, Հ. Ե. երես 70, ծանօթութիւն 1. „La mémoire de Théodose (I-er) est effectivement très-révérée chez les Arméniens, et ils possèdent plusieurs vies de Thédose remplies de faits controuvés et tout-à-fait indignes de confiance". և յերես 74, թէ Թէոդոս Առաջնոյն օրով „L' astronomie (աստեղաբաշխութիւն) était devenue inséparable des chimères de l'astrologie judiciaire (աստեղագիտութիւն, քաղդէութիւն)"։ Այսչափս բաւական չըլլալով առ ի փարատել զիմ տարակուսանս, խնդրեցի ի պատուական ուսուցչապետէն E. Teza, որ տեղեկացնէ զիս թէ ո՛ր է արդեօք Թէոդոսն յիշեալ Յեղնիկայ. պատասխանեց ուսուցչապետն թէ յետ բազում խուզարկութեանց անկարող կը գտնուէր զիս զոհացնելու։ Փոքր Սոկրատաւ յոգողեցայ վերջապէս լուծանել զառեղծուածն, և նշանակեցի ի լուսանցի ընդօրինակութեանս յերես 229. „Տե՛ս և Յեղնիկ, 156"։ գրեցի և առ ուսուցչապետն Teza ի 23 Ապրիլի 1891, թէ Եղնիկայ Թէոդոսն՝ անտարակոյս Թէոդոս Առաջին է։—D-r Simon Weber գրեց („Հանդէս", 1898, երես 111 ա.) թէ Եղնիկայ յիշած Թէոդոսն „Տարակոյս չը կայ, որ Թէոդոս Երրորդը չէ, 716—717. (Եղնիկ և ՈւԹերորդ դար.) Թէոդոս Մեծն ալ չէ կրնար ըլլալ. ուրեմն միայն Թէոդոս Երկրորդը կրնայ ըլլալ"։

[1]) «Հանդիսի» յօդուածիս մէջ (երես 274 ա.) Փոքր Սոկրատայ Թարգմանիչ կարծած եմ զԱբրահամ Մամիկոնեան, մատենագիր Հինգերորդ—Վեցերորդ դարուն թարգմանիչն Փոքր Սոկրատայ լիաբուռն գողացած է պատմական տեղեկութիւններ՝ ամէնքն ալ արտաքոյ յոյն բնագրի Աքղաստիկոսին, և հայկաբանութեան զարդարանքներ՝ գրեթէ ամէնքն արտաքոյ յոյն բնագրին. 1. Աստուածաշունչ Գիրք, մասնաւորապէս Սաղմոսք, Աւետարանք, Գործք Առաքելոց և Պաւղոսի Թուղթ. 2. Եղնիկ [1]). 3. Եւագր. 4. Ագաթանգեղոս. 5. Փաւստոս Բիւզանդ. 6. Մովսէս Խորենացի. 7. Եղիշէ. 8. Ղազար Փարպեցի. 9. Աբրահամ Մամիկոնեան [2]). 10.

[1]) Տե՛ս Տաշեան, Ցուցակ Հայ. Ձեռ. Մատենադարանին Մխեթ. ի Վիեննա, 1895, երես 925. տես և Տէր-Մովսէսեան, Սոկրատայ Աքղաստիկոսի Եկեղեցական Պատմութիւն, Էջմիածին, 1897, Յառաջաբան, երես Դ.

[2]) «Հանդիսի» յօդուածիս մէջ (երես 274 ա.) Փոքր Սոկրատայ Թարգմանիչ կարծած եմ զԱբրահամ Մամիկոնեան, մատենագիր Հինգերորդ—Վեցերորդ դա-

մանիայի ու Թիւրքիայի մէջ Ֆրիդրիխ մեծի ժամանակից եղած բարեկամական յարաբերութիւնները դեռ այնքան որոշ բնաւորութիւն չեն ունեցել, ինչպէս այս վերջին տարիները։ Այստեղ յիշում են, որ Գերմանիան վաղուց, նոյն իսկ այն բօպէից առաջ, երբ նա մի կողմ դրեց իր սրինգը, լոկ ձեի համար էր մասնակցում պետութիւնների կոնցերտին և Թիւրքերի ականջը որոշում էր սրինգի մեղմ ձայները նոյն իսկ այն դէպքերում, երբ կոնցերտը շատ աղմկալի կտորներ էր նուագում։ Այդ հանգամանքի վրա աւելացան՝ կայսրի բացարձակ պաշտպանութիւնը Թիւրքիային՝ Յունաստանի պատերազմի ժամանակ, գերմանական մարզիչների մասնակցութիւնը այն զօրքերի մէջ, որոնք այդ պատերազմը մղեցին և վերջապէս կայսերական զոյգի այցելութիւնը սուլթանին։ Այս բոլոր հանգամանքների շնորհիւ սուլթանի հեղինակութիւնը թէ ներսում և թէ դրսում ուժեղացաւ. Թիւրքիան ամրացաւ։ Ահա թէ ինչու Գերմանիան անվիճելի իրաւունք ունի փաղիշահի երախտագիտութիւնը գրաւելու։ Իրաւ, Թիւրքերի յարգանքը դէպի Գերմանիան և դէպի այստեղ ապրող գերմանացիները նշանաւոր կերպով մեծացաւ. իսկ թէ Գերմանիան կարող կը լինի օգտվել այս բոլորից —դրա ապացոյցը այն իմաստուն քաղաքականութիւնն է, որին նա հետևում էր մինչև այժմ։ Գերմանական կայսրութիւնը հողային նուաճումներ չէ ուզում և նրա շահերը ոչ մի բանի մէջ չեն հակասում միմեանց։ Գերմանիան այստեղ լոկ տնտեսական շահեր է որոնում և սա, ի հարկէ, օգուտ կը տայ նոյն իսկ Թիւրքիային։ Գերմանիային վերագրում են այն ծրագիրը, թէ նա ուզում է Անատոլիան բնակեցնել գերմանական գաղթականներով. բայց այդ միտքն իրագործելը դեռ հեռու է և ոչ Թիւրքիան, ոչ էլ նրա բարեկամները այժմ անհանգիստ չը պիտի լինեն այդ մտքից։ Սակայն առանց այս ընդարձակ գաղթականութեան էլ գերմանական ազդեցութիւնն աւելի և աւելի կը տարածվի տնտեսական գործերի մէջ և այդ կողմից դուցէ և կատարված կը լինեն, ի մեծ օգուտ Թիւրքիայի, գերմանական մի յայտնի տնտեսագէտի այս խօսքերը. «Գերմանական բանուորների վաչտերը կը նուաճեն Փոքր-Ասիան»։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

«ՀԱՅ-ՌՈՒՍԱԿԱՆ ՈՐԲԱՆՈՑՆԵՐԸ» ԹԻՒՐՔԻԱՅՈՒՄ

—

Թիւրքաց Հայաստանում 1894—96 թիւն տեղի ունեցած սարսափելի աղէտները ուրիշ ցաւալի ժառանգութեան հետ միասին թողել են 50,000 որբեր։ «Եղբայրական օգնութիւն» («Братская Помощь») ժողովածուի խմբագրութիւնը, բացի վնասվածներին զանազան ժամանակ ռուսաց դեսպանատան միջոցով ուղարկած 13,140 ռուբլի 65 կօպ. նպաստներից, ուղարկեց նորից 5,000 ր.՝ մշտական որբանոցներ հաստատելու համար։ Ի նկատի ունենալով, որ ամեն մի որբի պահպանութիւնը, հայոց պատրիարքարանի հաշուով, նստում է մօտ 50 ռուբլի, խմբագրութիւնն ուղարկեց 5,000 ր. 25 որբերի պահպանութեան համար՝ չորս տարվայ ընթացքում։

Ինչպէս երևում է Կ. Պոլսի ռուսաց կայսերական դեսպանատնից այս օրերս ստացած հաղորդագրութիւնից, դեսպան Զինովիեվ կատարեալ հաստակրութեամբ վերաբերվեց որբանոցներ հաստատելու մտքին և հայոց պատրիարքարանի հետ կայացած համաձայնութեամբ՝ որոշված է բանալ առաջին որբանոցը Պալու քաղաքում, Դիարբէքիրի վիլայէթում։ Որբանոցն ստացել է պաշտօնապէս «Orphelinat Arméno-Russe, fondé par souscription sous les auspices de la rédaction du recueil de Moscou «Secours fraternel aux arméniens de Turquie»։ (Հայ-ռուսական որբանոց, հիմնված Մոսկվայի «Եղբայրական օգնութիւն Թիւրքիայում վնասված հայերին» ժողովածուի խմբագրութեան հովանաւորութեան ներքոյ)։ Պատրիարքի կողմից դեսպանին գրած նամակից երևում է, որ Պալու թեմն ընտրված է իբրև ամենից շատ վնասված տեղերից մինը, ուր գաղթականների վերադարձից յետոյ աւելի շատացել է ժողովրդի կարօտութիւնը և թեմի ծիսական ցուցակների համաձայն, 2,250 որբ կայ։ Որբանոցի տեղ ընտրված է ամենահին վանքերից մինը—Ս. Աստուածածնի Քաղցրահայեաց վանքը։ Ցոյս կայ, որ, բարի մարդկանց համակրութեան շնորհիւ, կարելի լինի տարվայ վերջին բանալ և երկրորդ հայ-ռուսական որբանոց, որովհետև վերջին ժամանակներս շատացել են այն նուէրները, որոնք ստացվում են «Եղբայրական օգնութեան» երկրորդ հրատարակութեան վաճառումից։

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՆԵՐ

—

«Մշակի» մի առաջնորդող յօդուածը լրացնում ենք մի քանի տեղեկութիւններով, որոնք ցոյց են տալիս, թէ ինչ առաջադիմութիւն է անում ժողովրդական համալսարանը։

Բերլինում պրոֆէսօրներից կազմվել է մի մասնաժողով, որ բաց է անում «բարձրագոյն ժողովրդական կուրսեր»։ Իր տարածած յայտարարութիւնների մէջ մասնաժողովը ասում է, որ Անգլիայում կազմակերպած ժողովրդական համալսարանները և նրանց հետևողութեամբ Վիեննայում, Միւնխէնում, Լայպցիգում, Ենայում, այլ և Ամերիկայում կատարած փորձերը կատարեալ աջողութիւն ունեցան և ցոյց տուին, որ ժողովուրդը համալսարանական դիտութիւն ձեռք բերելու պահանջ ունի. ուստի և Բերլինի պրոֆէսօրները վճռեցին հիմնել բարձրագոյն կուրսեր, որոնց նպատակն է «տարածել ազգաբնակութեան լայն շրջանակներում, առանց խտրութեան սեռի և դասակարգի, գիտական հետազօտութիւնների արդիւնքը»։ Նոյեմբեր և դեկտեմբեր ամիսներում կը դասախօսվեն 12 կուրսեր, ամեն մէկը բաղկացած վեց հատ դասախօսութիւններից, որոնք կը տևեն մէկ ու կէս ժամ, մի ժամը դասախօսութեան համար, իսկ կէս ժամը—վիճաբանութիւնների համար։ Այսպէս, պրոֆէսօր Շմոլլէր կը կարդայ ամենագլխաւոր կուլտուրական պետութիւնների վաճառականական քաղաքականութեան մասին XVIII և XIX դարերում, իսկ պրոֆէսօր Կալ—Գերմանիայի պետական կազմակերպութեան մասին։

Գոնվեցան մարդիկ, որոնք, ինչպէս այդ յատուկ է բոլոր երկիրների խաւարապաշտ տարրերին, կասկածներ յայտնեցին և մոլի ակնարկներ արին ժողովրդական դասախօսութիւնների մասին։ Բայց ընդհանրապէս բոլոր կուսակցութիւնները, նոյն իսկ կղերականները, վերին աստիճանի համակրութեամբ վերաբերվեցան գերմանական պրոֆէսօրների ձեռնարկութեան։ Համալսարանական դասախօսութիւններ լսելու համար նշանակված է շատ չափաւոր գին՝ մի մարկ՝ վեց դասախօսութիւններից բաղկացած կուրսի համար։ Լէյպցիգում մի դասախօսութիւն լսելու համար նշանակված է վճար 10 պֆեննիգ (5 կոպէկ)։ Միւնխէնում բանուորները մի ամբողջ կուրսի համար վճարում են 60 պֆեննիգ (30 կոպէկ), ուսանողները, ուսուցիչները և քահանաները—մի մարկ, մնացած հասարակութիւնը—3 մարկ։ Բերլինում, բացի նոր հիմնվող կուրսերից, գոյութիւն ունի և «Ուրանիա» անունով գիտական թատրոն, որի նմանը չը կայ Եւրոպայի ոչ մի կողմում։ Այդ հիմնարկութիւնը յաճախ վարձում են բանուորական ընկերակցութիւնները և լսում են դասախօսութիւններ։

Ի դէպ. կարող ենք հաղորդել, որ բացի Պետերբուրգում ձեռնարկած դասախօսութիւններից, Մոսկվայի պրոֆէսօրներն էլ բարեգործական նպատակով հոկտեմբերի 26-ից բաց են արել «հրապարակական կուրսեր»։ Պրոֆէսօր Վիպպէր կը կարդայ «XVIII և XIX դարերի հասարակական վարդապետութիւնները և պատմական թէօրիաները», պրոֆէսօր Պավլով—ընդհանուր դէօլոգիայի մասին, պրոֆէսօր Սոկոլով—«Եւրոպական Ռուսաստանը իր ֆիզիկո-աշխարհագրական առանձնայատկութիւնների մէջ», պրոֆէսօր Կիրպիչնիկով—«Ռուսաց գրականութեան Պուշկինեան շրջանը», պրոֆէսօր Կուլագին—«Կենդանիների թագաւորութեան աճեցման մասին», պրոֆէսօր Տիխոմիրով—ընդհանուր կենդանաբանութեան մասին։ Տեղերի գները բաւական մատչելի են։ Չէ կարելի չողջունել Մոսկվայի պրոֆէսօրների այս համակրելի քայլը։

ՆԱՄԱԿ ԱԽԱԼՔԱԼԱՔԻՑ

—

Նոյեմբերի 2-ին

Հարկաւոր ենք համարում լրացնել մեր նախորդ թղթակցութիւնը։—Բացի ընթերցողներին յայտնի սխրագործութիւններից՝ Սանդաձէ հարստահարիչը, ոչ մի տնտեսական օրինաւոր մրցում չընդունելով՝ ջրաղացների մոնոպոլիան էլ է իրան վերապահում. վերջերս նա մի քանի ջրաղաց է ձեռք բերել և ստիպում է, որ շրջակայ գիւղացիները անպատճառ իր ջրաղացներից օգտվեն։ Հիմա ակամայ հարց է ծագում, թէ ինչի Սանդաձէի և իր որդկերանց գործ դրած բռնութիւնների, շատ անգամ ուղղակի քրէական յանցանքների մասին ոչ մի միջոցով տեղեկութիւն չէ հասնում իշխանութեանը, ոչ մի գործ չէ հասնում դատարանին և այլն։ Դրա միակ պատճառն այն է, որ բարոյապէս և տնտեսապէս ճնշված գիւղացին, աւելի խիստ բռնութիւններից վախենալով՝ չէ համարձակվում բողոքելու ուժեղ հարստահարիչի դէմ, իսկ ինչ վերաբերում է «գաւառական առիւծներին» դրանց անվնաս դարձնելու, «բերանները քաղցրացնելու» հնարը լաւ գիտէ Սանդաձէն, մանաւանդ իր «աղ ու հացով» այդ «առիւծներին» հիւրասիրելով և այլն։

Այդ դեռ մէկն է. քանի քանի ուրիշ, աւելի փոքր մեծութիւններ կազմող, Սանդաձէներ կան մեր գաւառում։ Զանազան տեսակի այդ սարդերը իրանց ոստայնները լարել են քաղաքում, Գեօնդուրա, Արագովա, Սաթիա, Եշիա, Խոսպիա, Կաճօ, Քօթելիա և այլ գիւղերում և ծրծում են ինքնօգնութեան և ինքնապաշտպանութեան գաղափարից զուրկ՝ թշուառ զոհերի արիւնը, որոնք սարդոստայնի մէջ ընկնելով՝ ճանճերի չափ անգամ չեն տղտղում... Այդ աշխարհակերների մէջ կայ և՛ հայ, և՛ վրացի, և՛ թուրք, և՛ կալուածատէր, և՛ վաճառական, և՛ քահանայ... որոնք, ի հարկէ, ոչ ազգութիւն են ճանաչում, ոչ հայրենիք, և իրանց ցանցերն անխտիր տարածում են ամեն կողմ, ուր նիւթական կարիք կայ։ Դրանք, մանաւանդ վերջին տարիները, յենվելով իրանց մի զօրեղ պաշտպանի վրա՝ անպատիժ կերպով հարստահարում էին գիւղացիներին. բայց, բարեբաղդաբար, զը-

---

Շարականք. 11. Հարցողաց գիրք Սրբոյն Բարսղի. 12. Ցաճախապատում. 13. Գրիգորի Նազիանզացւոյ Ճառք. 14. Վարք Հարանց. 15. Վարք Գրիգորի Սքանչելագործի. 16. Պատմութիւն Եւթն Մանկանց Եփեսոսի. 17. Վկայաբանութիւն Սրբոյն Թէոդորիտեայ. 18. Վկայաբանութիւն Սրբոյն Կիւրղի եպիսկոպոսի. 19. Վկայաբանութիւն Սրբոյն Մարկոսի Արեթուսայ եպիսկոպոսի. 20. Կայսերական գիրք. և թերևս այլք։ Ցայս ամենայն հայերէն մատենագրութեանց՝ առ այժմ կարևորագոյնն է մեզ համար Խորենացւոյ Պատմութիւնն, զի մեծ, շատ մեծ խնդիր մի պիտի որոշուի, թէ արդեօք Փոքր Սկրտչն առած է ի Խորենացւոյ յԵօթներորդ դարու՝ ինչպէս ես կը պնդեմ, թէ Խորենացի ի Փոքր Սկրատայ յԱութերորդ դարու՝ ինչպէս կը պնդեն Կարիէրեանք։ Կը սկսեմ ի պատմական գիտելեացն՝ որ նոյն են ի Փոքր Սկրատ և ի Խորենացի, գնելով զերեսս առաջնոյն ըստ տպագրին Էջմիածնի, 1897, և զերեսս երկրորդին ըստ տպագրին Ս. Ղազարու, 1881. (Խորենացւոյ վկայութիւնքն են ըստ իմումք ննադատեալ բնագրի.)

—

1) «Եւ հրամայէր ուրեմն կանգնել զնշան Խաչին Քրիստոսի. և զի ոչ էր գործ ճարտարի, արհամարհեալ լինէր ի բազմաց. իսկ սուրբ կինն կայր յաղաւթս զգիշերն ամենայն, և ի վաղիւն լուսաւորեալ լինէր նշան Խաչին, որ հիացոյց զհեռաւորս և զմերձաւորս, և հաստատեցան ի հաւատս». Սոկր. 65—66։ Այս է լուսաւոր խաչի զրոյցն՝ զոր Տ. Կարիէր չգտնելով ի յոյն բնագրի Սքոլաստիկոսին, բայց գտնելով առ Խորենացւոյ, վճռեց թէ Խորենացի առած է ի Փոքր Սոկրատայ յԱութերորդ դարու, և զուարճալի խորհրդածութիւն մի ևս աւելցուց («Հանդէս», 1893, երես 182), որ իբր թէ Խորենացի սխալ հասկացեր է զնշանակութիւն բառիցն Փոքր Սոկրատայ «լուսաւորեալ լինէր նշան խաչին»։ «Ո՞հ, կարի է առատպելս, այլ և առատպելաց առատպել»։

«Ուստն՝ եթէ նշանի Խաչին Քրիստոսի (պարտ է երկրպագել). զոր արարեալ կանգնեցին...։ Բայց յորժամ ելեալ ի բլուրն տեսին փայտ կոփեալ՝ ոչ ճարտարաց ինչ գործ, յոլովք քան զսակաւս արհամարհեցին... և ծագեաց լոյս տպաւորութեամբ խաչի ըստ ձևոյ և չափոյ փայտեղինին». Խոր. 361։ Փոքր Սոկրատայ բանաքաղութիւնն Խորենացւով չաւարտիր. «զհեռաւորս և զմերձաւորս», զոր և այլուր կը գործածէ բնագրէն դուրս, է ի Թղթոյն Եփեսացւոց, Բ. 17. «Խաղաղութիւն ձեզ հեռաւորաց, և խաղաղութիւն մերձաւորաց». կամ յԵղիշէէ. «Ահ սրբութեան նորա անկեալ էր զհեռաւորաւք և զմերձաւորաւք». Պտմ. Վարդանանց, Ը. երես 149 (տպ. Ս. Ղազարու, 1859)։ Իսկ «հաստատեցան ի հաւատս» է յԱգաթանգեղէ. «ի հաւատս հաստատեցան ամենեքին». երես 586 (տպ. Ս. Ղազարու, 1862)։

2) «Ըստ Առաքելուհւոյ կնոջն քարոզութեան, որում անուն էր Նունի, յընկերաց Սրբոյն Հռիփսիմեայ՝ որ ի Հայս կատարեցաւ։ Թողում ասել որ յաղագս նորա (Հռիփսիմեայ) է Պատմութիւն (Ագաթանգեղայ), և հաւատայն Հայոց մեծամեծ սքանչելիւք ի ձեռն Գրիգորի Պարթևի Խոստովանողի, որ ստոյգ ցուցանէ նորին գիրք (Ագաթանգեղոս)։ Եւ այս ամենայն լինէր ի նոյն ամս.» Սոկր. 67։

«Կին ոմն՝ անուն Նունի, յընկերաց Սրբոյն Հռիփսիմեայ». Խոր. 358։ Ցայս գլխոյ Խորենացւոյ՝ Փոքր Սոկրատն ուրիշ երկու բան ալ գողացած է, Առաքելուհի և Քաղաք նախագահ, զորս պիտի տեսնենք ի տարի։ Իսկ ինչ ասենք Ագաթանգեղոսի Պատմութեան և Գրիգորի Պարթևի յիշատակութեանն։

3. «Եւ առաքեաց հրաւիրակս գալ ի ժողով ի Կոստանդնուպոլիս, Դամասոս ի Հռովմայ, ... և Բասիլիոս Կեսարացի, և Գրիգոր Նիւսացի՝ եղբայր Բարսղի, և Ներսէս Պարթև Հայոց Մեծաց, զոր Վաղէսի էր արտաքսաստմանեալ, և Թէոդոսի ածեալ՝ ունի մեծարանաւք, մինչեւ հաւատն ստուգեսցի ի ժողովն». Սոկր. 414—416։

«Եւ ժողովեալ Սուրբ Հարքն ի թագաւորեալ քաղաքն Բիւզանդիոն, Դամասիոս Հռովմայ, ... Սուրբն Ներսէս ի Հայոց Մեծաց, Գրիգորիոս Նիւսիայ, Բասիլիոս Կեսարու». Խոր. 465։ Ի նմին երեսի՝ քանի մի տող վերագոյն՝ կ'ըսէ նաև Խորենացի. «Սա (Թէոդոս Ա.) դարձոյց զաժենայն Հարս Սուրբս՝ որք յաղագս ուղղափառութեանն արտաքսամանեալ էին ի մեռաղս. ընդ որս և զմեծն Ներսէս ածեալ առ իւր ի Բիւզանդիոն, պահէ մեծաւ պատուով, մինչեւ ճշմարտութեանն ստուգեցաւ հաւատ»։ Գիտելի է, որ Դամասիոս Հռովմայ և Գրիգորիոս Նիւսիայ կան յամենայն Զեռագիրս Խորենացւոյ.—Բասիլիոս Կեսարու՝ է ըստ Վիսոնական տպագրին, երես 269, ըստ մի Զեռագրի Խորենացւոյ և ըստ Ճառընտրի, որ կան ի Ս. Ղազար (տես ի մեծագիր Խորենացի Մխիթարեանց Վենետկոյ, տպ. 1865, երես 221, ծանօթութիւն 3). միւս Զեռագիրք Խորենացւոյ ունին Գեղասիոս Կեսարու.—Սուրբն Ներսէս ի Հայոց Մեծաց չկայ և յոչ մի Զեռագրի Խորենացւոյ, այլ ի Ճառընտրի (տես ի մեծագիր Խորենացի Մխիթարեանց Վենետկոյ, երես 221, ծանօթութիւն 2)։ Փոքր Սոկրատայ թարգմանիչն անտարակոյս ունէր օրինակ մի Խորենացւոյ՝ յորմէ գրեալ էր Բասիլիոս Կեսարու, փոխանակ Գեղասիոս Կեսարու, և յաւելուածով՝ Սուրբն Ներսէս ի Հայոց Մեծաց։ Այս ևս գիտելի է, որ Կայսերական գրոց մէջ ալ կը յիշուին Գրիգոր Նիւսիայ և Դամասիոս Հռովմայ ի ժողովին Կոստանդնուպոլսի ընդդէմ Մակեդոնի, ինչպէս և Գեղասիոս (ոչ Բասիլիոս) Կեսարիայ. բայց «Ներսէս Պարթև Հայոց Մեծաց» չկայ անդ։ Եթէ Փոքր Սոկրատ ի Կայսերական գրոց առած ըլլար զանուանս ժողովականացն, անշուշտ Գեղասիոս կը գրէր փոխանակ Բասիլիոսի, և զՆերսէս Պարթևի անունն չէր յիշեր. արեգական լուսոյ պէս պայծառ է որ առած է զանուանսդ ի Խորենացւոյ, և այնմ կ'երաշխաւորեն ի Խորենացւոյ գողացեալ բառքն ևս, արտաքսաստմանեալ, ածեալ, մինչեւ հաւատն ստուգեսցի։

—

— Ո՛չ այդպէս, կը պատասխանեն Կարիէրեանք։ Փոքր Սոկրատայ թարգմանիչն շատ մատեաններ կարդացած է և շատ բան գիտէ. իրեն են թէ լուսաւոր խաչին զրոյցն, թէ Նունի անունն, թէ Դամասոս և միւս երեք անուանքն, հանդերձ յարակից բառերով, և Խորենացի է, որ առած է զայդոսիկ յԱութերորդ դարու ի Փոքր Սոկրատայ։

Բայց ինչ զարմանալի դիպուած՝ որ ի թագաւորութենէ Մեծին Կոստանդիանոսի մինչև ցերեսներորդ առաջներորդ տարին թագաւորութեան Թէոդոսի Երկրորդի, յամէ 306 մինչև ցամն 439, Խորենացի միայն երեք անգամ պէտք կունենայ պատմական տեղեկութեանց ի Փոքր Սոկրատայ, և երեք անգամ ալ կիյնայ ճիշդ ու ճիշդ այնպիսի տեղեաց վերայ՝ յորոց և ոչ մին կայ ի յունարէն բնագրի Սքոլաստիկոսին։ Բանաւոր է խորհրդածութիւն, թէ անբանաւոր։ Խորենացի է ընդօրինակիչ Փոքր Սոկրատայ, թէ Փոքր Սոկրատ՝ Խորենացւոյ։

(Կը շարունակվի)

Նորայր Ն. Բիւզանդացի

Ց. Գ. Առաջին յօդուածիս մէջ՝ ուր գրեալ է «ոչ թէ անգթութեամբ հանգոյն դառն դահձի», պէտք է կարդալ՝ «ոչ թէ անգթութեամբ հանգոյն դառն դահձի կուփահարելոյ»։ Նոյնպէս ուր գրեալ է. „Բայց արդեօք ներելի՞ է տարակուսել զժամանակէ Խորենացւոյ՝, պէտք է կարդալ. «Բայց արդեօք ներելի՞ է տարակուսել անգամ զժամանակէ Խորենացւոյ»։

բանց այդ պաշտպանը հիմա չը կայ։ Լսում ենք, որ մեր գաւառի հարկային տեսուչ Լ. Ղուկասեան մտադիր է Թիֆլիսի գիւղատնտեսական ընկերութեան ժողովում մանրամասն զեկուցում կարդալու մեր գաւառում տեղի ունեցող վաշխառութեան մասին, եթէ իրանից անկախ մի պատճառ արգելք չը լինի։ Անկասկած՝ ինտելիգենցիայի գլխաւոր պարտականութիւններից մէկն է՝ ուսումնասիրել գիւղացիների տնտեսական դրութիւնը և այն բոլոր պատճառները, որոնք արգելք են լինում գիւղացու բարօրութեան. բայց վաշխառուներն իրանց յանցաւոր գործունէութեան վերջ կը տան միայն այն ժամանակ, երբ իրաւաբանական փաստերով զինված լինելով՝ կարելի լինի դրանցից մի քանիսին անողոք արդարադատութեան մատնել. հակառակ դէպքում՝ իրական փաստերը լոկ փաստեր կը մնան, իսկ այդ իրաւաբանական փաստերը կարող են ձեռք բերել և երևան հանել գիւղական ուսուցիչները, որոնց վրա այդ տեսակէտից մեծ պարտականութիւն կայ։ Ամեն մի անհատ պարտական է կուտելու ժողովրդական ցեցերի դէմ, մանաւանդ երբ այդ ցեցերը, ինչպէս վայել է ստոր էակներին, յարմարվելով միջավայրին՝ անկատելի կերպով են արնաքաղ անում անմեղունչ ժողովրդին...

Զ. Տ.-Գ.

ՆԱՄԱԿ ՆՈՐ-ՆԱԽԻՋԵՒԱՆԻՑ

Հոկտեմբերի 26-ին

Առաջին նամակում խօսելով թեմական դպրոցին արած այցելութեան մասին, խոստացել էի հաղորդել ընթերցողին հայր Զարիֆեանի կրօնագիտութեան դասի մասին, որ ես առիթ ունեցայ լսելու առաջին պատրաստականում։ Այցելած օրը, հայր Զարիֆեան աշակերտներին հարցնում էր հին դաս։ Նա դուրս կանչեց մի կայտառ և զուարթադէմ աշակերտի և առաջարկեց Նրան՝ «Հայր մեր» աղօթքն ասել, և յետոյ հարցրեց՝ թէ ինչու համար այս աղօթքը կոչվում է Տէրունական աղօթք։ Ապա հրաւիրեց մի ուրիշ աշակերտի, որին ցոյց տուեց մի պատկեր և պահանջեց սրա նկատողական բացատրութիւնը։ Ես անկասկած եմ, որ հայր Զարիֆեան ամեն կերպ աշխատող է սեմինարիական ծրագիրը ճշդութեամբ կատարելու. բայց արդեօք լաւ չէր լինի, եթէ ուսուցիչն աշխատէր իրանից կազմել բարոյական, փոքրիկ՝ տղայոց կեանքից առնված պատմութիւններ, որոնց բովանդակութիւնը համապատասխանէր գրաբար «Հայր մեր» բովանդակութեանը։ Այն՝ ինչ որ երեխայի համար վերացական է, պէտք է աշխատել՝ կեանքից առնված՝ նման օրինակներով զգալի դարձնել և տպաւորել երեխայի սրտում ու մտքում. ապա թէ ոչ միայն վերացականը հաղորդելով երեխաներին՝ նրանց սրտի և մտքի բարոյական դաստիարակութիւնը թոյլ և անհաստատ կը լինի։ Ես զգում եմ կրօնագիտութեան դասախօսութեան ամենամեծ դժուարութիւնը՝ համեմատելով միւս առարկաների հետ՝ առաջին պատրաստականում, որտեղ աշակերտները ուսուցչից պահանջում են՝ համեմատ իրանց մարմնական և հոգեկան զարգացման աստիճանի՝ ամենայն դասի մարմնացումը... իսկ այս գործը ուսումնարանում այն ժամանակ կատարված է համարվում, երբ ուսուցիչը կարող է ըմբռնելի կերպով դատել, բացատրել, խօսել երեխաների հետ, ինչպէս որ նրանք իրար հետ են խօսում... Մանաւանդ երբ դասախօսելի առարկան կրօնագիտութիւնն է, վերացական բարոյագիտութիւնն է... Ուրիշ դիրք բռնող ուսուցիչը կամ դասագիրքը, միշտ անհասկանալի կը մնայ երեխաների համար։

Յաջորդ ժամին այցելեցի պ. Սմբատեանի ռուսերէն դասախօսութիւնը երկրորդ պատրաստական դասարանում։ Պ. Սմբատեան կարդալ տուեց մի քանի աշակերտների, ոմանց կրկնել տուեց բերանացի սովորած բանաստեղծութիւնները և մի երկուսին էլ թելադրեց գրատախտակի վրա։ Աշակերտների մաքուր արտասանութիւնը ամենայն կերպ գովելի է։ Նրանք բաւական վարժ կարդում են և ոչ դժուարութեամբ թարգմանում։ Աշակերտների տետրակները, ինչպէս որ մի քանիսի զննութիւնից երևաց՝ բաւական մաքուր և գեղեցիկ են գրված։ Կարգապահութիւնն էլ դասարանում ամեն կերպ գովելի էր։ Միայն մի բան գովելի չէ, այն՝ որ աշակերտները կարդալու, կամ բերանացի մի բան ասելու և կամ կարդացածները պատմելու ժամանակ միշտ շտապելով են անում ամեն ինչ։ Ցանկալի է, որ ուսուցիչը այդ բանի վրա առանձին ուշադրութիւն դարձնի, ապա թէ ոչ յետոյ շատ դժուար կը լինի ուղղել բարձր դասարաններում։ Եթէ այդ բանին պ. Սմբատեան ինքը օրինակ տայ աշակերտներին՝ աւելի ծանր խօսելով՝ ինչպէս որ ուսուցիչ պ. Թանդեանն է անում, այն ժամանակ շատ շուտով այդ պակասութեան առաջն էլ առնված կը լինի։

Դուրս գալով դասարանից, տեսուչ Զարբխանի հետ այցելեցինք ճաշարանը, որտեղ աշակերտները ժամը 11-ից նախաճաշիկ էին անում։ Նախաճաշից յետոյ աշակերտներից մէկը աղօթք ասաց. յետոյ բոլորս բարձրացանք վերնայարկը, ուր տեսուչն առաջարկեց ինձ տեսնել վերնայարկի գիշերօթիկ աշակերտների ննջարանը. այնուհետև գնացինք դիտելու ներքնայարկի ննջարանը։ Ամեն տեղ մաքրութիւն էր տիրում։ Միմիայն ննջարանների օդափոխութիւնը, ինչպէս ինձ երևաց, դանդաղ է, որովհետև օդահանների թիւը փոքր է և ինքեանք էլ մանր։ Այս մասին ես խօսեցի պ. Կարապետ Թօջայեանի՝ սեմինարիայի գանձապահ-հոգաբարձուի հետ և նա հետևեալ օրը խօսեց օդահաններ չինող արհեստաւորի հետ և պատուիրեց Նրանց ինչ որ հարկաւոր էր։ Չեմ կարող չը յիշել այստեղ պ. Թօջայեանի՝ արթուն գանձապահ-հոգաբարձուի մասին և այն կողմից, որ անցեալ 1897 թուականի վերջում և այս տարվայ սկզբում ուսուցիչ պ. Սմբատեանի հետ անձամբ այցելելով Նոր-Նախիջևանի 134 աղքատ տները՝ հանգանակութեան է ձեռնարկել և ժողովել աղքատասէր մարդկանցից այնքան դրամ, որ կարողացել է շատ աղքատ ընտանիքներ ազատել նեղութիւններից և ցրտերից։ Երբ սկսել են իւրաքանչիւր աղքատի տուն ուղարկվել առատօրէն վառելիք, հագնելիք, ուտելիք, վարձվել է նոր բնակարան՝ փչելու մօտիկ բնակարանից ազատվելու համար, բժիշկ՝ հիւանդներին բժշկելու համար, այն ժամանակ 134 աղքատ տների մէջ դադարել է լացը, կոծը և ախ ու վախը։ Այդ պատուաբեր գործ է։

Սրապիոն քահանայ Սամուէլեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Երէկ, նոյեմբերի 6-ին, կայացաւ Թիֆլիսի քաղաքային դումայի արտակարգ ժողովը, որ հրաւիրված էր լսելու Մեծ Իշխան Միխայիլ Նիկոլայեվիչի պետական գործունէութեան յիսնամեայ յօբելեանը տօնելու մասին զեկուցումը։ Դուման փոքր վիճաբանութիւնից յետոյ ընդունեց ամբողջութեամբ ուպրավայի և յատուկ յանձնաժողովի մշակած առաջարկը հետևեալ բովանդակութեամբ. 1) յօբելեանի առիթով բանալ Թիֆլիս քաղաքում չորս-դասեան մի դպրոց, 2) հիմնել առաջին և երկրորդ իգական գիմնազիաներում հինգ-հինգ ստիպենդիա և մանկաբարձական ինստիտուտում մի ստիպենդիա և 3) անուանել Նաբերեժնայա փողոցի այն մասը, որ գտնվում է Նիկոլայեվսկի կամուրջի և Ինկերների ուսումնարանի միջև՝ Մեծ-Իշխանեան—«Վելիկոկնեաժեսկի»։ Բացի դրանից քաղաքային ինքնավարութեան կողմից կուղարկվի Մեծ Իշխանին շնորհաւորական հեռագիր։

—

Կովկասեան կառավարչապետ իշխան Գոլիցինի կարգադրութեամբ՝ քաղաքային ուպրավայի մէջ սկսված բեվիզիան շարունակվում է, և դեռ էլի մի քանի ժամանակ կը տևի։

—

Մեր թղթակիցը Էջմիածնից մեզ հաղորդում է. «Կիրակի, հոկտեմբերի 25-ին, կրկին եպիսկոպոսացուների ձեռնադրութիւն էր։ Ձեռնադրվեցին Թիւրքիայից եկած երեք վարդապետներ և մէկն էլ Էջմիածնի միաբաններից այն է՝ Յովհաննէս վարդապետ Շիրակունի։ Թէև լուր կար, որ պէտք է ձեռնադրվեն նոյնպէս Յուսիկ, Ղևոնդ և Աշոտ վարդապետները, բայց, որպէս լսեցինք, Գարեգին վարդապետ Սաթունեանի պատճառով յետաձգվեց սրանց ձեռնադրութիւնը. բայց եթէ շուտով կը դան Թիւրքիայից էլի նոր եպիսկոպոսացուներ, տեղացիներից մի քանիսն էլ մէկ-մէկ կը ձեռնադրվեն՝ բազմացնելու հայոց անփայլ եպիսկոպոսների թիւը...»։

—

Նորերս Հարաւային Ամերիկայի Արգենտինեան հանրապետութեան մէջ մեռաւ կովկասեան բուսաբանութեան հետազօտող Ն. Աշբօվ։ «Русскія Вѣдомости» լրագիրը այդ առիթով ասում է հետևեալը։ «Անխոնջ հետազօտողը և կովկասեան բուսաբանութեան հաւանօրէն ամենաաւելի մասնագէտը, որ նուիրել էր իրան բնութեան ուսումնասիրութեան, հիմք ունէր յուսալու, որ նրա գիտնական ձգտումները կը գտնեն պաշտպանութիւն ռուսաց ուսումնական աշխարհում և կը տան նրան միջոց՝ հետազօտելու Ռուսաստանի ասիական սահմանագլուխները։ Սակայն իրականութիւնը բոլորովին հակառակը ցոյց տուեց. նա ամբողջ կեանքում ստիպված էր նիւթական զրկանքներ կրել և նոյն իսկ Կովկասը ուսումնասիրեց այլազգիների օգնութեամբ, իսկ յետոյ տեղափոխվեց Արգենտինա, ուր նրա այժմը գնահատվեցին»։ Տարաբաղդաբար դա առաջին օրինակը չէ։ Շատ բարեխիղճ աշխատաւորներ ստիպված են լինում օտար երկիրներում գործել՝ աջակցութիւն չը գտնելով անտարբեր հայրենիքում։

—

Ժողովրդական լուսաւորութեան մինիստրութեան մէջ, եթէ հաւատանք մայրաքաղաքի լրագրների լուրերին, հարց է յարուցված փոփոխելու իգական գիմնազիաների ծրագիրը։ Բացի դրանից, միտք կայ վերացնելու մի դասարանից միւսը փոխվելու համար նշանակված քննութիւնները։

—

ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻՑ մեզ գրում են. «Գողութիւնները շարունակվում են. անցեալ շաբաթ գիւղի հրապարակից գողացան մի խեղճ ապարանցու զոյգ եզը, որով յոյս ունէր մի քանի կօպէկ աշխատել և ձմեռվայ կարիքը հոգալ։ Ասում են, որ եզների տէրը գանգատվել է նահանգապետին, խնդրելով՝ իր եզները պահանջել գիւղի տանուտէրից, պատճառաբանելով, որ տանուտէրը ոչ թէ միայն միջոց չի ձեռք առել բռնելու գողերին, այլ ցոյց տուած գողին պաշտպան է հանդիսացել և խորհուրդ է տուել գիւղացուն 30 ր. տանուլ եզների փոխարէն և դրանով բաւականանալ։ Նահանգապետը կարգադրել է հասարակութիւնից ժողովել 120 ր. և տալ եզների տիրոջ։ Գողութիւններ պատահում են նաև Էջմիածնի վանքի պարիսպների ներսը, միաբանների սենեակներում։ Օրինակ՝ գողացել են մի երկու միաբաններից արծաթեղէն և այլ իրեր, որ յետոյ գտնվեցին Ղևոնդ վարդապետի «ժՆԹի» սենեակում, նրա անկողնի մէջ։ Արդեօք գողացողը վարդապետի «ժՆԹն» է եղել, թէ նրա միւս ծառաները, մինչև այժմ դեռ անյայտ է մնացել»։

—

ՂԱԶԱԽԻՑ մեզ գրում են, որ Քրդեվան գիւղում սով է տիրապետում։

—

ԳԱՆՁԱԿԻՑ մեզ գրում են. «Հոկտեմբերի 24-ի երեկոյեան մեր յաջորդ Բագրատ վ. Թաւաքալեանի հրաւէրքով ժողովվել էին յաջորդարանի դահլիճում 25—26 հոգի։ Մօտ 115 հոգուն ուղղած հրաւէրքում, յաջորդը յայտնել էր, որ որ ժողովի է հրաւիրում մի կարևոր հասարակական հարցի մասին խորհելու։ Եւ ինչ էք կարծում։ Երբ սակաւաժարդ ժողովը բանալով՝ յաջորդը յայտնեց, թէ ինչու համար է հրաւիրել՝ շատերը մնացին ապշած։ Հայր Թաւաքալեանը, իբրև յաջորդ Գանձակի, հաւաքում է Գանձակի եկեղեցիների ծխականներին յաջորդարանի դահլիճում, մի կարևոր հասարակական հարցի մասին խորհելու համար և այդ կարևոր հասարակական հարցը վերջանում է նրանով, որ առաջարկվում է, թէ ողորմութիւն արէք, պարոններ, բաժանորդներ դրուեցէք այս ինչ հրատարակութեան և այլն... Մենք այդպիսի մի վարմունք չէինք սպասում մեր յաջորդից։ Դա վերին աստիճանի անհամակրելի ձև է, ժողովի հրաւիրել, առանց յայտնելու բուն նպատակը։ Ներկայ դէպքում մեզ համար միևնոյն է թէ ինչ օրգանի համար է անվում այդ «քաղաքավարի մուրացկանութիւնը», կարևորը այն միջոցն է, որին դիմեց ժողով հրաւիրողը։ Այդպիսի «կարևոր» հասարակական հարցի մասին խորհելու համար յաջորդը պէտք է այլ ճանապարհ ընտրէր, դիմելով պարզ և որոշ գրութեամբ և ոչ թէ մութ կարևոր բառով։ Այդ տեսակ ձևերը չեն նպաստի այս և այն օրգանին», այլ աւելի կը վնասեն և բացի դրանից կը սառեցնեն հասարակութիւնը՝ խրտնեցնելով նրան մինչև իսկ հասարակական ժողովներից»։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԵԾԱԳՈՐԾՈՒԹԻՒՆԸ—ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆՈՒԹԵԱՆ ՁԻՆՔ

—

Բնական է, որ շատ ծանր պիտի լինէր ֆրանսիացիների պէս մի դիւրագրգիռ և հայրենասէր ժողովրդի համար այնքան մեծ պարտութիւն կրել Ֆաշօդայի հարցում։ Ստիպված լինելով զիջել, Ֆրանսիան մի և նոյն ժամանակ խոստովանեց իր թուլութիւնը Անգլիայի ծովային ահռելի այժմի առաջ։ Իսկ թոյլ լինել ներկայ ժամանակներում՝ նշանակում է ամենվին ուժեղի կամայականութիւններին։ Թուլութիւնն անները է մանաւանդ այն պետութիւնների համար, որոնք գաղթականութիւններ ունեն երկրագնդի զանազան կողմերում։ Իսկ Ֆրանսիան բաւական հողեր ունի Աֆրիկայում և պարտաւոր է պահպանել նրանց։ Ֆաշօդայի հարցը մի աւելորդ նախազգուշացում էր Ֆրանսիական կառավարութեան համար, թէ պէտք է կապվել հեռաւոր կօլօնիաների հետ։ Այդ անհրաժեշտութիւնն ի նկատի առնելով, Ֆրանսիացի յայտնի տնտեսագէտ Լերուա-Բոլիէ առաջարկում է Ֆրանսիական կառավարութեան՝ երկաթուղու գիծ անցկացնել Սահարա անապատի միջով և հասցնել այդ գիծը կենտրօնական Աֆրիկային, ուր ֆրանսիական կօլօնիաներ կան։ Այդ ճանապարհով Ֆրանսիան կարող է իր ցամաքային այժերը միշտ արագութեամբ գործադրել իր կօլօնիաների պաշտպանութեան համար։ Լերուա Բոլիէ ասում է, որ եթէ Սահարայի գիծը կառուցվէր մի քսան տարի առաջ, այժմ Ֆրանսիան այնքան թոյլ չէր լինի Աֆրիկայում։

Մի կողմ թողնելով նշանաւոր տնտեսագէտի առաջարկութեան ռազմական նշանակութիւնը, կարելի է ասել, որ եթէ Ֆրանսիան գլուխ բերէ այդպիսի մի վիթխարի գործ, ամբողջ աշխարհին նա մի գեղեցիկ օրինակ տուած կը լինէր։ Սահարան, որ այժմ սարսափների մի հայրենիք է ներկայացնում, կը դառնար մի ճանապարհ, որով ազգերի քաղաքակրթական հոսանքը կը հեղեղէր կենտրօնական Աֆրիկան և այդ անյայտ աշխարհը մի նոր դանձ կը դարձնէր մարդկութեան համար։ Մեռած անապատների միջով ճանապարհ անցկացնելը մի այնպիսի մեծագործութիւն կը լինէր, որի նմանը դեռ չէ տեսել աշխարհը։ Թող այդ մեծագործութիւնը կատարվի նոյն իսկ ինքնապաշտպանութեան համար. օգտվողը ոչ միայն պաշտպանվողը կը լինի, այլ և այն հարուստ, անագին երկիրը, որ ընկած է կենտրօնական Աֆրիկայում և այնքան թշուառ է իր վայրենութեան պատճառով։ Ընդհանուր քաղաքակրթութեան տեսակէտից, մանաւանդ այնպիսի ժամանակ, երբ ազգերն իրանց արդիւնաբերական և վաճառականական գործունէութեան համար լայն ասպարէզ են պահանջում, առաջացնելով մրցութիւններ,—մի կատարեալ բարերարութիւն կը լինէր, բարերարութիւն՝ որով Ֆրանսիան կարող էր յաւիտեան պարծենալ։

ԱԻՍՏՐԻԱԿԱՆ ՊԱՐԼԱՄԵՆՏՈՒՄ

—

Աւստրիական պատգամաւորների ժողովի նիստում, հոկտեմբերի 27-ին, տեղի ունեցաւ մի նոր և արտասովոր տգեղ աղմկալի տեսարան։

Պատգամաւոր Շենեերէր առաջարկութիւն մտցրեց՝ դատի ենթարկել մինիստր-նախագահ Տունին և իր ճառի մէջ ծիծաղեց լեհ պատգամաւոր Եավորսկու և առհասարակ լեհերի վրա՝ նրանց «կեղծաւոր հայրենասիրութեան» համար։ Վօլֆ պատգամաւորը նոյնպէս մի քանի խօսք ասաց և աւելացրեց. «Լեհերը պարազիտներ են և կեղեքիչներ»։ Լեհ պատգամաւորները, նոյն իսկ լեհ սոցիալիստները կատաղեցին զայրոյթից և գոռացին. «Զրկեցէք խօսքից պրուսացի լրտեսին. յետ առէք ձեր խօսքերը»։ Լեհ պատգամաւոր Դաշինսկի աւելացրեց. «Եթէ դուք ազնիւ մարդ էք, դուք իսկոյն յետ կառնէք ձեր խօսքը»։ Նախագահը յայտնեց, որ նա զրկում է Վօլֆին խօսքից՝ լեհ ազգին ծանր կերպով վիրաւորելու համար։ Դաշինսկի շարունակում է. «Ես կարծում եմ, որ մենք ամենքս, առանց ազգութեան և կուսակցութիւնների խտրութեան, ցանկանում ենք բարեկիթ երևալ և այդ պատճառով պէտք է բողոքենք այն բանի դէմ, թէ ամբողջ լեհ ազգը բաղկանում է պարազիտներից»։

Վօլֆ. Դուք այնքան յիմար չէք, որ կարծէք, թէ ես ենթադրել եմ այդպէս։

Դաշինսկի. Այդ ժողովուրդը հազարներով աշխատում է ածխային հանքերում վերին Սիլեզիայում, Սաքսոնիայում և Վեստֆալիայում և աշխատում է այն գերմանական հայրենասէր ֆաբրիկանտների համար, որոնք պահում են Վօլֆին։

Վօլֆ. Դուք ստախօս սրիկայ էք։

Դաշինսկի. Այո, պահում են ազգային տուրքերի և ազգային ընծաների անունով։

Վօլֆ. Դուք ստախօս էք և սրիկայ։

Դաշինսկի. Հեշտ է որոշել, ով է պարազիտ, լեհ բանուորները և գիւղացիները, թէ վաճառվող Վօլֆը։ Մենք գիտենք, որ դուք մուրացկան էք և պարազիտ նոյն իսկ քաղաքականութեան մէջ։ Լեհ ազգի անունից ձեզ յայտնում եմ լիակատար արհամարհանք. դուք կորցրել էք ձեզ հետ՝ իբրև բարեկիրթ մարդու հետ վարվելու իրաւունքը»։

ՆԱՄԱԿ ԳԵՐՄԱՆԻԱՑԻՑ

—

Լայպցիգ, նոյեմբերի 9-ին

Վաղուց է, որ այստեղի կանայք խնդիրներով

դիմում էին քաղաքային վարչութեան, որպէս զի վերջինը ուսուցչուհիներ պատրաստելու համար մի սեմինարիա բաց անի, բայց միշտ մերժում էին ստանում: Սակայն նրանք չը յուսահատվեցին և նորերս կրկին դիմեցին, և վերջապէս այս անգամ նրանց խնդիրքն ընդունվեց և շուտով կը բացվի այդ սեմինարիան, թէպէտ ոչ բարձր ցէնզաւոր ուսուցչուհիներ պատրաստելու համար, ինչպէս այդ ցանկանում էին Լայպցիգի կանայք:

Հիւսիսային Գերմանիայում, ինչպէս յայտնի է, ապրում են մօտ 20,000 դանիացիներ, որոնք, ինչպէս կարելի է գերմանական լրագիրներից եզրակացնել, դժուարութեամբ են ենթարկվում գերմանացման, ուստի և սաստիկ հալածվում են գերմանական կառավարութիւնից: 1898 թուի փետրվարից մինչև այժմ աքսորված են 61 դանիացիներ, որոնք մեղադրվում էին որպէս դանիականութեան ագիտատորներ: «Hamburger Nachrichten» լրագիրը մի զզուելի յօդուած է տպել, որը այսպէս է վերջանում. «Եթէ գերմանական կառավարութիւնը այս հակագերմանական շարժման դէմ՝ ինչպէս տանտէր իրաւունքներ է բանացրել և փետրվարից մինչև այժմ 60 դանիացիներ է աքսորել,— այդ դէպքում «անգութ» ձեռնարկութեան մասին խօսք էլ չէ կարող լինել...»:

Այս սեմեստր այստեղի հայ ուսանողները մի քանի հոգով աւելացել են, բայց նորեկ ուսանող միայն մէկն է—Բագուից. մնացածները ուրիշ քաղաքներից տեղափոխվածներ են, որոնց թվում երկու վարդապետ՝ աստուածաբան և լեզուագէտ: Կանանց թիւը զգալի կերպով աւելացել է, որոնց թվում երեք ռուս կանայք, բայց ոչ մի հայ: Մօտ մի ամիս է, որ սեմեստրն ըսկսվել է, բայց «Հայ ճեմարանական ընկերութիւնը» միայն այսօր է բաց նամակներ ուղարկում հրաւիրելու նորեկներին՝ նախապատրաստական ժողովի: Վերջին չորս սեմեստրները այդ ժողովները զգալի կերպով անկանոն էին գնում. մինչդեռ առաջ շաբաթական մի նիստ էր լինում և իւրաքանչիւր անգամ ըէֆէրատ էր կարդացվում, վերջերում երկու կամ երեք շաբաթը մի անգամ էր ժողով լինում և այն ստէպ առանց ըէֆէրատների...

Հրաշալի գարնանային եղանակներին այսօր յաջորդեց մի հեղձուցիչ մառախուղ, որը թոյլ չէ տալիս մի քանի քայլ տարածութեան վրա միմեանց տեսնել:

Ստ. Սարուխանեան

ՆԱՄԱԿ ՀԱԲԵՇՏԱՆԻՑ

—

Հաբաբ, հոկտեմբերի 9-ին

Դարձեալ պատրաստութիւններ կը տեսնուին Հաբեշստանի մէջ: Մի ամիս կը լինի, որ կառավարութեան կողմից Եւրոպա ուղարկվեցաւ Սարգիս էֆ. Դերվեանց՝ ռազմամթերքի մեծ պատուէր տալու համար: Այս մարդը, որ երկար ժամանակէ ի վեր մեծ ծառայութիւններ մատուցած է կառավարութեան, ահագին քանակութեամբ զէնք է մտցրել երկրին մէջ. ինքն անձամբ եղել է զինուորական նշանաւոր պաշտօնավարութեան մէջ և Մենելիք թագաւորից ստացած է շքանշան. թագաւորը, նրան վարձատրելու համար, տուած է հողային կալուածներ և նուէրներ, բաւական քանակութեամբ էլ ոսկի ու փղոսկր և թոյլ է տուել, որ վաճառականութեամբ զբաղվի: Զէնքեր պատուիրելը առիթ կը տայ կարծելու, որ Հաբէշ կառավարութիւնը նորէն գործ ունի, բայց թէ ում հետ, առայժմ քողարկված է:

Մ. Բ.

„ՄՇԱԿԻ" ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

—

ԽԱՐԿՈՎ, 6 նոյեմբերի: Նոյեմբերի 1-ին բանտարները Վիննիկովո կայարանի մօտ մի կընոջ դիակ գտան, ցցի վրա բարձրացրած. բերանի մէջ կոխած էր երկաթուղային տոմսակ, գրպանում գտան 98 բուբլի փող: Քննութիւն է կատարվում:

ՄԱՆՉԵՍՏՐ, 6 նոյեմբերի: Զեմբերլէն, շարունակելով իր ճառը, ասաց, որ Անգլիան ուզում է այնպիսի իրաւունքներ ձեռք բերել Զինաստանում, որոնք անհրաժեշտ են իր ծովային դիրքը ապահովացնելու համար: Ցանկալի կը լինէր համաձայնութիւն կայացնել Ռուսաստանի հետ՝ չինական առևտրական կենտրոնները բաց պահելու համար, բայց այդ տեսակ համաձայնութիւնները հիմնաւոր չեն, եթէ չեն յենվում երկու երկրների շահերի վրա, և կամ եթէ մի կողմը այնքան ուժեղ չէ, որ ստիպի համաձայնութիւն կայացնել: Անգլիայի յարաբերութիւնները Գերմանիայի և Ամերիկայի հետ սրտագին և ջոտիկ են: Այդ երկու երկրների շահերը համանման են Անգլիայի շահերին: Սակայն պաշտօնական դաշնակցութեան մասին խօսք չը կայ: Անգլիան այդ բանին կարիք չունի:

ՍԷՈՒԼ, 6 նոյեմբերի: Կառավարութիւնը հրատարակեց մի յայտարարութիւն, որի նպատակն է արգելել օտարերկրացիներին առևտուր անել Կորէայում:

ՄԱԼՏԱ, 6 նոյեմբերի: Կայսերական զոյգը, ցանկանալով շուտով տուն վերադառնալ կուղեւորվի Գերմանիա՝ ուղիղ գծով, Պուլուի վրայով:

ՊԱՐԻԶ, 6 նոյեմբերի: Փաստաբան Լաբօրի թոյլտուութիւն ստացաւ խօսելու Պիկարի հետ:

Վճռաբեկինջ ատեանը դեռ ևս չէ պահանջել զինուորական մինիստրից՝ գաղտնի դոկումենտները:

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆԸ ՑԱՑՏՆՈՒՄ Է

—

ԼԱՑՊՑԻԳ. X. Ընտրութիւնների մասին ամփոփ և կարճ թղթակցութիւններ շատ ցանկալի են: «Բնագիտական զրոյցները» անկարող ենք տպագրել այդ ձևով: Քննադատութիւնը կը տպագրվի:

ԱԼԷՔՍԱՆԴՐԻԱ. ***. Յօդուածի մի մասը չը տպագրվեց մեզանից անկախ պատճառով:

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատար.՝ ԱՐԾՐՈՒՆՈՒ ԺԱՌԱՆԳՆԵՐ

ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

—

Մարդատար № 1 գնացքը դուրս է գալիս ԲԱԳՈՒԻՑ դէպի ԹԻՖԼԻՍ յերեկվայ 4 ժամին և 15 րոպէին. Թիֆլիս է հասնում առաւօտեան 8 ժամ 38 րոպէին. Դուրս է գնում ԹԻՖԼԻՍԻՑ դէպի ԲԱԹՈՒՄ առաւօտեան 9 ժամ և 20 րոպէին. Բաթում է հասնում երեկոյեան 8 ժամ և 52 րոպէին:

Մարդատար № 3 գնացքը դուրս է գալիս ԲԱԳՈՒԻՑ դէպի ԹԻՖԼԻՍ՝ երեկոյեան 10 ժամ 50 րոպէին. Թիֆլիս է հասնում երեկոյեան 5 ժամ և 9 րոպէին: Դուրս է գնում ԹԻՖԼԻՍԻՑ դէպի ԲԱԹՈՒՄ՝ երեկոյեան 6 ժամ 10 րոպէին. Բաթում է հասնում առաւօտեան 7 ժամին:

Մարդատար № 2 գնացքը դուրս է գալիս ԲԱԹՈՒՄԻՑ դէպի ԹԻՖԼԻՍ՝ առաւօտեան 8 ժամ 30 րոպէին. Թիֆլիս է հասնում երեկոյեան 8 ժամ 30 րոպէին: ԹԻՖԼԻՍԻՑ դէպի ԲԱԳՈՒ է դուրս գալիս՝ երեկոյեան 9 ժամ 15 րոպէին. Բագու է հասնում յերեկվայ 12 ժամ 59 րոպէին:

Մարդատար № 4 գնացքը դուրս է գալիս ԲԱԹՈՒՄԻՑ դէպի ԹԻՖԼԻՍ երեկոյեան 8 ժամ 40 րոպէին. Թիֆլիս է հասնում առաւօտեան 9 ժամ 55 րոպէին: ԹԻՖԼԻՍԻՑ դէպի ԲԱԳՈՒ է դուրս գալիս առաւօտեան 11 ժամ 20 րոպէին. Բագու է հասնում առաւօտեան 5 ժամ 42 րոպէին:

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Բ. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆԻ

(Կուկիա, Վօրոնցովի արձանի հանդէպ)

Հիւանդներին ընդունում են ամեն օր, բացի կիրակի օրերից:

ԱՌԱՒՕՏՆԵՐԸ՝

Բ. Ա. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան, վեներական (սիֆիլիս) և միզասեռ. հ.

Կ. Մ. ՁԻԿՈՎԱՆԻ—9—10 ժ. աչքի, ներքին և նեարդային հ.

Զ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆՑ—11—12 ժ. կանանց հիւանդ.

Ի. Ֆ. ՊՐՕՏԱՍԵՎԻՉ—12—1 ժ. ականջի, կոկորդի, քթի և կրծքի հ.

Ա. Պ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆՑ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.

Ա. Գ. ԳՈՒՐԿՈ—1¼—2¼ ժ. ներքին և միասեռական հ.

ԵՐԵԿՈՆԵՐԸ՝

Վ. Մ. ՄԱԽՎԻԼԱՁԷ—5—6 ժ. ներքին և երեխայոց հ.

Ա. Ն. ՇՊԱԿՈՎՍԿԻ—6—7 ժ. նեարդային (ելեկտրաբուժութիւն), վեներական և մորթի հ.

Բ. Ա. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ—6½—7 ժ.

Տ. Ի. ՐՈՒԴԵՆԿՈ հիւանդանոցումը քիմիական և խոշորացուցական հետազօտութիւններ է անում մէզի, խոխ, արեան, կաթի և այլն:

Վճար 50 կ. չքաւորները ձրի: Համախորհրդի (կոնսիլիումի) և օպերացիայի համար առանձին:

Հիւանդանոցի վերատեսուչ՝

48—150 Բժշկապետ ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ

Մամուլի տակն է և շուտով լոյս կը տեսնի

ՀԱՅՈՑ ՆՈՐԱԳՈՅՆ
բանաստեղծներ

(Կրիտիկական յօդուած)

Ա. ԳՐԻԳՈՅԿ

Հեղինակութիւն՝ ՌՈՒԲԷՆ ԲԵՐԲԵՐԵԱՆԻ

2—3

Նոյեմբերի 18-ին, 1898 ամի, ՆԵՐՍԻՍԵԱՆ ՀԱՑՈՑ ՀՈԳԵՒՈՐ ԴՊՐՈՑԻ հոգաբարձութեան խորհրդարանում լինելու է՝

ԱՃՈՒՐԴ

կապալով տալու դպրոցապատկան տունը, որ ընծայել է հանգուցեալ Փիրոյեանց. այդ տունը գտնվում է Սօլդատսկի բազարում և բերում է տարին 14,229 ր. եկամուտ: Պայմանաթուղթը կարելի է տեսնել հոգաբարձական դիւանատան մէջ ամեն օր, բացի կիրակի և տօն օրերից, ցերեկվայ 10—1 ժամը:

1—2

Լոյս տեսաւ ՄԵՐ ԿԱԶՄԱԾ

1899 Թ. ՊԱՏԻ, ԾՈՑԻ ԵՒ ՍԵՂԱՆԻ ՕՐԱՑՈՅՑՆԵՐԸ

ՀԱՐՈՒՍՑ ՑԱՒԵԼՈՒԱԾՈՎ ՆԻ ԵՐԱԶԱՀԱՆՈՎ

Ցանկացողները թո՛ղ շտապեն մեզ յայտնելու, որպէս զի ժամանակին կարողանանք հասցնել:

Թիֆլիս՝ Մակար Զմշկեան

(Ե. շ.) 9—20

ԹԻՖԼԻՍԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑՈՒՄ

ծախվում են՝	Ր.	Կ.
1) Լ. ՍԱՐԳՍԵԱՆՑԻ՝ «Այց Թիւրքաց Հայաստանին» (սակաւաթիւ)	—	60
2) Լ. ՍԱՐԳՍԵԱՆՑԻ՝ «Ժողովրդի կրթութեան գործը մեզանում»	—	20
3) Զ. Ս. ՄԻԼԼԻ՝ «Ազատութեան մասին»	1	20
4) Ս. ԱՒԵՏԻՔԵԱՆՑԻ՝ «Իրլանդիայի դատը»	—	80
5) Ս. ՍԱՐԳՍԵԱՆՑԻ՝ «Գուլեցոց բարբառը»	2	—
	4	12

Լոյս տեսաւ

ԿԱՐԱՊԵՏ ԱՓԻՆԵԱՆԻ

1899

ՊԱՏԻ ԵՒ ԾՈՑԻ ՕՐԱՑՈՅՑՆԵՐԸ

Ծոցի օրացոյցն ունի հարուստ յաւելուած՝ երաշխանով և զուարճալի վիճակարանով: Պատի օրացոյցի իւրաքանչիւր թերթի երկրորդ երեսի վրա կան՝ ընտիր մտքեր, անեկդոտներ, առածներ, ժողովրդական երգեր, հանելուկներ և զանազան հետաքրքիր տեղեկութիւններ:

Գները՝ ՊԱՏԻՆԸ—50 կոպ.
ԾՈՑԻՆԸ—20 կոպ.

Դիմել՝ АЛЕКСАНДРОПОЛЬ, Карапету Апинянъ.

(չ.) 3—6

ԹԻՖԼԻՍԻ ՀԱՅՈՑ ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Գրասենեակում վաճառվում են՝

	Ր.	Կ.
ԱԳԱԹԱՆԳԵՂՈՍԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ	1	»
ՍՏԵՓԱՆՆՈՍ ՏԱՐՕՆԵՑՈՒ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ.	2	»
ԹԻՖԼԻՍԵՑՈՑ ՄՏԱՒՈՐ ԿԵԱՆՔԸ	1	50
ՂԵՒՈՆԴ ՊԱՏՄԱԳԻՐ	2	»
ԴԱՍԱԳԻՐՔ ԿՐՕՆԻ ուսուցիչների համար.	1	75
ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ Դարտելի.	1	25
ՀԱՆՐԱՄԱՏՉԵԼԻ ԲՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ Լունկեվիչի	1	»
ՀԱՆՐԱՄԱՏՉԵԼԻ ԱՍՏՂԱԲԱՇՈՒԹԻՒՆ Ֆըլամմարիօնի	1	»
ՔՆՆԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ Դարագաշեանի.	4	»
ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ, Պալասանեանի	1	50
ԱԿՆԱՑ ՀՆՈՒԹԻՒՆՔ, Ճանիկեանի	2	»
ՄԱՆԿԱԿԱՆ ԼՕՏՕ, (հայ., ռուս., ֆրանսերէն և վրացերէն)	1	20
ԱԶԳԱՑԻՆ ՁՕՁԵՐ, Պարոնեանի	1	»
ԴԱՒԻԹ ԿՕՊՊԵՐՖԻԼԴ, Դիկկենսի	1	»
ՎԷՊԻԿՆԵՐ և ՁՐՈՑՑՆԵՐ, Մօպասանի	1	»
ՑՈ՞ ԵՐԹԱՍ, Սենկեվիչի	1	50
ՄԱՐԴ ԵՄ, Էբերսի	1	»

Դիմել՝ Тифлисъ. Тифлисское Общес. Изд. Арм. книгъ. 16—20

ԱՁԴ

Խարբերդի Բաղմաշէն գիւղէն, 35 տարեկան Ցակոբ Ս. Մալխասեան անուն անձը, կարճահասակ, թխագոյն, տասը տարիէ ի վեր անյայտացած է: Այս անձն 1887-ին Պաթումում գաղթած է, տարի մը միայն իր տունը նամակ գրելուց յետոյ՝ Պաթումէն եկած ու ալ լռած է: Ինքը կերչ քաղաքին մէջ ըլլալ կը կարծուի: Գիտցողք թող հաճին հետևեալ հասցէին լուր տալ՝

АМЕРИКА, Sahak Malkasian Hood Rubber Co. EAST WATERTONEN Mass, U. S. A.

2—3

ՀՐԱՒԷՐ

Նոյեմբերի 8-ին, կիրակի օրը, ս. պատարագից յետոյ, Զրկինենց ս. Կարապետ եկեղեցու բարեպաշտ ծխականները հրաւիրվում են յիշեալ եկեղեցին՝ նոր ԵՐԷՑՓՈՒ ընտրելու համար:

Գործակալ ա. մ. եկեղեցեաց Հայոց՝

2—2 Զաքարիա քահանայ Զարդեղեանց

Բ. Ժ. ՎԱՀԱՆ ԱՐԾՐՈՒՆԻ

ԸՆԴՈՒՆՈՒՄ Է ՀԻՒԱՆԴՆԵՐ

մասնագիտաբար բգի, կոկորդի, քթի և ականջի հիւանդութիւններով:

Առաւօտեան 9—12 ժ.
Երեկոյեան 4—7 ժ.

Գօլովինսկի պրոսպ. № 28, տ. Աղաժվի:

2—10

Լուսանկար Տէր-Ղևոնդեանի մօտ վաճառվում են

ԱՆԴՐԻԱՍ ԱՐԾՐՈՒՆԻ

ՄԵԾԱԴԻՐ և ՓՈՔՐԱԴԻՐ ՊԱՏԿԵՐՆԵՐԸ, որ արժեն 1 ր. 40 և 20 կոպէկ: Դիմել՝ Тифлисъ, фотографу Теръ-Гевондянцу. 11—15



Շահաւէտ Խորհուրդ!!!

Պահանջեցէք «ՇՕ-ԴԸ-ՖՕՆԻ» գլխաւոր պահեստից տղաղամարդկանց արծաթեայ ժամացոյց «ՍԱՆԻ» նշանակով, պատրաստած համաշխարհային հռչակ ունեցող «ԳԷՕՐԳ ՖԱՎՐ ԺԱԿՕԻ»

ԸՆԴԱՄԵՆԸ 12 ՐՈՒԲԼԻ 50 ԿՕՊ.

ԿԱՆԱՆՑԸ՝ 50 ԿՕՊԷԿՈՎ ԱՒԵԼԻ ԹԱՆԴ

Ուղարկվում է՝ 2 բուբլի գրաւական ստանալուց յետոյ, մնացածը վերադիր վճարով:

ՀԱՍՑԷՆ.

ГЛАВНЫЙ СКЛАДЪ ЧАСОВЪ ШО-ДЕ-ФОНЪ въ ВАРШАВѢ.

Ծանօթութիւն. ա) «ԳԷՕՐԳ ՖԱՎՐ ԺԱԿՕԻ» ժամացոյցները երաշխաւորութեան կարիք չունեն. 2) Զը նայած պատուէրների շատութեան, հերթը խստութեամբ պահպանվում է:

(III, չ) 1—2

BATEAUX A VAPEUR FRANCAIS N. PAQUET ET C-ie

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱՒԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Ն. ՊԱԿԷ ԵՒ ԸՆԿ.

Կանոնաւոր և ուղղակի նաւագնացութիւն ՄԱՐՍԷՑԼԻՑ ԲԱԹՈՒՄ, չորեքշաբթի օրերը, երկու շաբաթը մի անգամ, սկսած յունվարի 25/6-ի չորեքշաբթիից,

Եւ հակառակը՝ Բաթումից Մարսէլ, մտնելով Տրապիզոն, Սամսոն և Պօլիս: Մեկնում է Բաթումից՝ չորեքշաբթի, 11/23 նոյեմբերի ԱՆԱՏՕԼԻ շոգենաւը, նաւապետ ԲԻԱՆԿԻ: Եւ այսպէս շարունակաբար, երկու շաբաթը մի անգամ, չորեքշաբթի օրերը, ժամը 4-ին ճաշից յետոյ:

Բաթումից Պարիզ ուղղակի հաղորդակցութեան տոմսակներ տրվում են սովորականից պակաս գներով:

Ապրանքների և ճանապարհորդների մասին հարկաւոր տեղեկութիւններ ստանալու համար թող բարեհաճեն դիմել ընկերութեան գործակատարներին՝

ԲԱԹՈՒՄՈՒՄ—պ. Վիկտոր դ'Արմօին, Նաբէրէժնայա: ԹԻՖԼԻՍՈՒՄ—պ. Օ. Գ. Բաբեկենդանեանին, Սիոնի փող. նախկին Արծրունու քարվանսարա: ԲԱԳՈՒ—պ. Ս. Դիլդարեանին, Կօլիւբակինսկայա հրապարակ: ՆՈՎՈՐՕՍՍԻՑՍԿ—պ. Մելխիօր Հերշենզոնին: (Ե. Հ. չ.) 15—20

Дозволено цензурою, Тифлисъ, 6 Ноября 1898 г. Типографія Грузинск. Издат. Т—ва, Лорисъ-Мелик. ул. № 13.